ՊԱՇՏՈՆ	Կոմիսիոն բիզնեսի բաժնի անհատական մենեջեր
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ	29/08/2025
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	12/09/2025
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Անժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է փորձառու և մոտիվացված թեկնածուի, ով կմիանա բանկին որպես Կոմիսիոն բիզնեսի բաժնի անհատական մենեջեր, ստորև ներկայացված պարտականությունները կատարելու նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կորպորատիվ հաճախորդների ներգրավում,
- Կորպորատիվ պրոդուկտների մասով վաճառքների իրականացում, մասնավորապես՝ բիզնես օվերդրաֆտի, ՊՈՍ”/“Վ-ՊՈՍ” վճարային համակարգերի, աշխատավարձային պրոդուկների, թվային ապառիկ և այլն
- Բանկի այլ պրոդուկտների վաճառքների իրականացում,
- Կորպորատիվ հաճախորդների ներգրավման տվյալների բազաների վարում,
- Կորպորատիվ հաճախորդների պորտֆելի սպասարկում, խորհրդատվության տրամադրում, գործնական հարաբերությունների ստեղծում և զարգացում:
- Հաճախորդներից ֆինանսական տվյալների, իրավաբանական փաթեթի այլ անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում ամփոփում:
- Տվյալ հաճախորդի մասով բոլոր պրոդուկտների ստացվելիք եկամտաբերության հաշվարկի իրականացում:
- Հաճախորդների համար առավել/նվազ բարենպաստ՝ արտոնյալ պայմանների հաստատման գործընթացի իրականացում (նոր սակագին, և այլն),
- Համաձայն ներքին իրավական ակտերի, իր իրավասությունների շրջանակներում, ՀՀ պետ ռեգիստրից, Վարկային բյուրոյից և այլ իրավասու մարմիններից հարցումների իրականացում :

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն մասնագիտական կրթություն
- Նվազագույնը 1-2 տարվա աշխատանքային փորձ համապատասխան ոլորտում
- Անգլերեն, ռուսերեն, հայերեն լեզուների լավ իմացություն
- Բանկային պրոդուկտների և ծառայությունների իմացություն
- Բանկային օրենսդրության իմացություն
- Համակարգչային գիտելիքներ – Excel -ի լավ իմացություն, LS Bank ծրագրի իմացությունը կդիտվի որպես առավելություն
- Հաղորդակցման հմտություններ

- Խաչաձև վաճառքի հմտություններ
- Վերլուծական հմտություններ
- Կազմակերպչական հմտություններ և ժամանակի արդյունավետ կառավարում
- Միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու կարողություն
- Մանրուքների նկատմամբ ուշադրություն
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/29 : Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://www.idbank.am/: